ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/8999/02/24 ք. Երևան
12 Սեպտեմբերի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Միսեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/8999/02/24 քաղաքացիական գործը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ նաև Դատարան) քննել է թիվ ԵԴ2/8999/02/24 քաղաքացիական գործն ըստ հայցի «Ստրոյ Գրուպ» ՍՊԸ-ի ընդդեմ պատասխանող ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի, երրորդ անձ «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի՝ հետևյալ հայցապահանջով՝ անվավեր ճանաչել Բյուրեղավանի համայնքապետարանի և «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ /կոն-սորցիում՝ «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ/-ի միջև 15.03.2024թ.-ին կնքված ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-24/12 ծած-կագրով գնման պայմանագիրը Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից միակողմանի լուծելու մասին 30.09.2024թ. որոշումը:
Դատարանը (դատավոր Ա. Օհանյան) 16.12.2024թ. կայացրել է վճիռ՝ հետևյալ բովանդակությամբ. «1. «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղա-վանի համայնքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ

ինքնուրույն պահանջներ չներկա-յացնող երրորդ անձ՝ «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի՝ Բյուրեղավանի համայնքապետարանի և «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (կոնսորցիում՝ «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ) միջև 15.03.2024 թվականին կնքված ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-24/12 ծածկագրով գնման պայմանագիրը Բյուրեղավանի համայն-քապետարանի կողմից միակողմանի լուծելու մասին 30.09.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել ամբողջությամբ.

1.1. անվավեր ճանաչել Բյուրեղավանի համայնքապետարանի և «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (կոնսորցիում՝ «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ) միջև 15.03.2024 թվականին կնքված ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-24/12 ծածկագրով գնման պայմանագիրը Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից միակողմանի լուծելու մասին 30.09.2024 թվականի ծանուցմամբ կայացված որոշումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 31.10.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի փաստացի կատարումը: ...»:

Վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով, որի արդյունքում Վերաքննիչ քաղա¬քա¬ցիական դատարանը 11.08.2025թ.-ին կայացրել է որոշում՝ հետևյալ բովան-դակությամբ. «Վերաքննիչ բողոքը բավարարել: Թիվ ԵԴ2/8999/02/24 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 16.12.2024 թվականի վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում կայացվելիք դատական ակտով: ...»:

ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը որոշմամբ արձանագրել է, որ՝ «(...) Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը ոչ միայն սահմանել է ապացույցի հասկացությունը, այլ նաև դրա տեսակները, հետևաբար Դատարանը բազմա-կողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ որոշման հանգելու համար պարտավոր է յուրաքանչյուր ապացույց հետազոտել նախ՝ գործին դրա վերաբերելիության, օրենքով նման ապացույցի թույլատրելիության, արժանահավատության տեսանկյունից, ապա գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը: Այսպիսով, միայն նշված կարգի պահպանմամբ յուրաքանչյուր ապացույց հետազոտելուց և դրանից հետո Դատարանի կողմից բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատելուց հետո կարելի է գալ եզրահանգման այս կամ այն փաստի առկայության կամ բացակայության մա-սին: Տվյալ դեպքում Բյուրեղավանի

համայնքապետարանի կարիքների համար Բյուրեղավան համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԿՄԲՀԳՀԱՇՁԲ-24/12 ծածկագրով գնման ընթացակարգ: Հայտեր են ներկայացրել «Դավարտ» ՍՊԸ-ն, «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ-ն, «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն /կոնսորցիում՝ «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ն/ և «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.02.2024 թվականի թիվ 3 արձանա-գրության համաձայն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից հաղթող /ընտրված/ մասնակից է ճանաչվել «ՍՏՐՈՅԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն /կոնսորցիում՝ «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 19.02.2024 թվականին https://gnumner.minfin.am/ կայքում հրապարակվել է հայտարարություն՝ պայմանագիր կնքելու մասին, իսկ 18.03.2024 թվականին հրապարակվել է հայտարարություն՝ կնքված պայմանագրի մասին: Մասնավորապես՝ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքա-պետարանի (Պատվիրատու) և «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (Կապալառու) միջև 15.03.2024 թվականին կնքվել է համայնքի կարիքների համար կապալային աշխատանքների կատար-ման գնման ԿՄԲՀԳՀԱՇՁԲ-24/12 պայմանագիրը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվում է սույն պայմանա-գրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի №1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատես-ված Բյուրեղավան համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանք-ները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 110 օրացույցային օր: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝ ա) Կա-պալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, բ) Կապա-լառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացու-ցային գրաֆիկը), գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատաս-խանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին, դ) Կա-պալառուի կողմից խախտվել են

պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:
Պայմանագրի 6.2 կետի համաձայն՝ սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացած աշխա-տանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 տոկոսի չափով: ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքի ղեկավարի կողմից 15.10.2024 թվականին կայացված թիվ 1461/24 պայմանագրի միակող-մանի լուծման մասին ծանուցմամբ լուծվել է ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայն-քապետարանի և «ՍՏՐՈՑ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 15.03.2024 թվականին կնքված թիվ ԿՄԲՀ- ԳՀԱՇՁԲ-24/12 ծածկագրով պայմանագիրը:
Որպես պատճառաբանություն նշվել է այն, որ պայմանագրի շրջանակներում ընկերու-թյունը պետք է իրականացներ Բյուրեղավան համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքներ՝ 2024 թվականի ապրիլի 01-ից 110 օրացույցային օրվա ընթացքում, սակայն ըստ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագրի՝ ընկերությունը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորություն-ները, մասնավորապես՝ պայմանագրով սահմանված ժամկետում ընկերությունը չի կատարել Բյուրեղավան համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքները:
Գործի հանգամանքների նման դասավորվածության պայմաններում գործով հիմնա-վորվել է այն փաստը, որ կողմերի միջև կնքված պայմանագրով կապալառուն պետք է պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացներ պայմանագրի №1 Հավելվածով սահմանված ծավալաթերթնախահաշվով նախատեսված Բյուրեղավան համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքները: Պայմանագրի 1.3 կետով սահմանվել է, որ նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 110 օրացույցային օր, իսկ պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկա-յացված օրացուցային գրաֆիկով:
Բողոքարկված վճռով Դատարանը հայցը բավարարել է այն պատճառաբանությամբ, որ. «Պատասխանողը Դատարան ներկայացված հայցադիմումի պատասխանով հայտնել է, որ Պայմանագրի հավելված 8-ի օրացույցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետի սկիզբ նշվել է 10.04.2024 թվականը, իսկ ավարտը՝ 110 օրացույցային օր հետո: Այս առումով Դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործի քննության ընթացքում Դատարան չի ներկայացվել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 8-ի օրացույցային գրաֆիկը, որպիսի հանգամանքով

պայմանավորված Դատարանը զրկված է եղել ուսումնասիրելու Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետների բովանդակությանը: Այսինքն՝ գործի քննության ընթացքում Դատարան չներկայացնելով Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 8-ի օրացույցային գրաֆիկը, որպիսի ապացույցի բացակայության պայմաններում Դատարանը հնարավորություն չի ունեցել կատարելու որոշակի դատողություններ առ այն, թե Կողմերի կողմից հաստատված և Պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվով աշխատանքերը Կապալառուի կողմից ինչ ժամկետում պետք է իրականացվեին, որը չի իրականացվել, այսինքն՝ Դատարանը օբյեկտիվորեն զրկված է եղել պարտավորությունների կետանցման հստակ օրը որոշելու հնարավորությունից:
Արդյունքում, Դատարանը փաստում է, որ ներկայացված ապացույցներով հնարավոր չէ պարզել, թե ի սկզբանե Պայմանագիրը կնքելուց Կապալառու ընկերությունն ինչ ժամկետնե-րում ինչ աշխատանքներ կատարելու պարտավորություն է ստանձնել: Փաստերի դասավոր-վածության նման պայմաններում Դատարանն արձանագրում է, որ Պայմանագրով նախա-տեսված աշխատանքները սկսվելու օրը վիճելի լինելու դեպքում նաև հնարավոր չէ որոշել աշխատանքների կատարման վերջնաժամկետի օրը: ... Պայմանագրով սահմանված աշխա-տանքների կատարման ժամկետը օրը վիճելի լինելու դեպքում, հնարավոր չէ հաստատված համարել Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից խախտելու փաստական հանգամանքը:»:
Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ պայմանագրում հավելված 8-ի առկայության մասին որևէ խոսք առկա չէ, կողմերը դրան որևէ հղում պայմանագրով չեն կատարել, այլ պարտավորությունների կատարման ժամկետները ֆիքսել են պայմանագրի 1.3 կետով և պայմանագրի հավելված 2-ով, որը գործով ներկայացված է եղել Դատարանին, սակայն Դատարանն այդ ապացույցին առհասարակ չի անդրադարձել, չի հետազոտել և գնահատել այն, այն պայմաններում, երբ բողոքաբերի փաստարկմամբ այդ ապացույցը բովանդակել է աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը և ավարտը:
Հետևաբար, հաշվի առնելով, որ Դատարանը չի հետազոտել գործի լուծման տեսանկ-յունից վճռորոշ նշանակություն ունեցող ապացույցը՝ որոշելով դրա թույլատրելիության, վերաբերելիության և արժանահավատության հարցը, ինչպես նաև դրանից ելնելով չի որոշել հայցի հիմնավորված լինել կամ չլինելու հանգամանքը, գործում առկա բոլոր ապացույցների համադրությամբ և վերլուծությամբ, ստացվում է, որ վճիռը չի կարող համոզիչ լինել, և գործը ենթակա է ամբողջ ծավալով նոր քննության, քանի որ
Դատարանը չի իրականացրել ապացույցների պատշաճ հետազոտում և գնահատում, համակողմանի կերպով: Ընդ որում, կատարման ժամկետները ֆիքսելուց հետո Դատարանը պետք է ապացուցման բեռ բաշխի կողմերի միջև

և կապալառուի վրա դնի պայմանագրով ստանձնած պարտավորությունը պատշաճ, մասնավորապես՝ սահմանված ժամկետում կատարած լինելու փաստի ապացուցման բեռը, քանի որ կողմերը գտնվել են պայմանա-գրային հարաբերությունների մեջ, իսկ պայմանագրի միակողմանի լուծումը պայմանա-վորված է եղել հենց պայմանագրով սահմանված ժամկետում կապալային աշխատանքները կատարած չլինելու հանգամանքով: Այսպիսով, ստացվում է, որ վերաքննիչ բողոքի փաս-տարկները հիմնավոր են և ինքնին բավարար՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և գործն ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու համար:»:

Քաղաքացիական գործը բեկանումից հետո 10.09.2025թ. մակագրվել է դատավոր Դ.Միխեյանին:

ՔԴՕ 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում դատարանը գործն ստա¬նալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՔԴՕ 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՔԴՕ 234.5-րդ հոդվածի 2-րդ մասը, Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը պետք է ընդունել վարույթ և սահմանել եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր:

Վերոգրյալի հիման վրա՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ԵԴ2/8999/02/24 քաղաքացիական գործն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թ. հոկտեմբերի 10-ին՝ դատական պաշտոնական կայքի միջոցով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2025.09.12 19:20:21 AMT

Դատավոր՝ Դանիել Միխեյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am